ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-23/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Բաճկոնը՝ (արական սեռի) (երկարաթև) մուգ կապույտ (Զինվորական քննչական գլխավոր վարչության համար՝ մուգ կանաչ գույնի) (235 գ/մք խտությամբ, 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ ջակարդե արծաթագույն թելով ասեղնագործ թևքանշան՝ ՀՀ քննչական կոմիտեի խորհրդանիշի պատկերով, 4.5 սմ շառավիղով Մանրամասների համար օգտվել ‘‘Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը’’ սահմանելու մասին ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն և 23.02.2022թ. թիվ 231-Ն որոշումների դրույթներից: Մատակարարը պարտավոր է իր ֆինասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ էտալոնային փորձագիտական լաբարատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության վերաբերյալ լաբարատոր հետազոտության եզրակացությունները: • Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուրի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ: • Արտաքին տեսքը և գործվածքի երանգը նախօրոք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: • Արտաքին տեսքը պետք է լինի ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից

	հաստատված նմուշի: • Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր համազգեստի չափսերը վերցնել ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում: • Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում: • Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեսականու անվանումը և ծառայողի անուն ազգանունը: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հասցեների:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-23/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	